

ԲԱՅՆՔԵՐ

Ի Պուրկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՍԵՊՏ. 2 ՇԱՐԱԹ 1900

ԹԻԻ 177

ՔՕՆԹՐՕԼԸ

Արձակի այս անմիջապէս կացութեան մէջ՝ Հայը ամենուրեք և ամեն դասակարգի վրայ կը տեսնէ մէկէ աւելի ողբալի թերութիւններ, որոց զոհ կերթայ ազգային ամեն գործ յայտնի անկումներով:

Վարժարանական գործը՝ որին համար Պուրկարական Հայ մամուլը այս տարի քիչ մը աւելի զբաղուեցաւ գաղաբարի ցիրուցան արտայայտումներով, նորէն միեւնոյն ողբալի և անկայուն դրութեան մէջ կը յանձնուի 1901 տարւոյն, ինչպէս յոռեգոյն մարգարէութեամբ մը գուշակուած էր արդէն մասնաւորապէս այս էջերուն մէջ կանխօրօք:

Մամուլի քննադատութեան թափը իր բովանդակ ուժով ինկաւ վարժապետներուն վրայ, որ սակայն քուէարկելի բան մը չունենալուն, ոչ ոք գրեթէ ժպտեցաւ չքմեղանքի բառ մը թուցնել իր բերնէն: Մանկութիւնը՝ իրաւունք, կը խամբէր ատոնց ձեռքով և կրթական ընդհանուր աւերակին մէջ ի հարկէ ոչ ոք կը յանդգնէր օրհնութեան ալիւններ կարդալ այդ խամբող ու փճացնող հաւաքական ուժին: Մէկ քանի բուեր միայն օրուան այդ աւերակները գոցելու համար թեւերին լարեցին ու արնու չափ խոշոր ճշմարտութիւններ սքօղելու ծիծաղելի մարմաջն ունեցան անճարակօրէն:

Բայց բան մը կայ՝ զոր չինք ուզեր անտես առնել այն պահուն, ուր Հոգաբարձու ըսուած մարմինները թուի թէ իրենց սեփական աշխատութիւններէն գոնէ՝ սիկար ծխելու սահմանած վայրկեաններն կը նուիրեն սա օրեր վարժարանական գործին: Այդ բանը՝ հարցնել է իրենց թէ

այս բոլոր քննադատութիւններէն քիչ թէ շատ օգտուեցա՞ն և կամ աւանդական հոտած ուղղութեան մը չեղելով, որպիսի է, «վկայական ունիս», բեր թուղթ տեսնենք», աւելի խոտապահանջ և աւելի շրջապէս գոտուեցա՞ն, թէ ոչ միշտ՝ միեւնոյն աղաներն են նորէն, որ չարչրի արշինով կը չափեն ամեն ինչ և թոյլ կուտան, որ Հայուն համար այս գերազանցապէս ճակատագրային ու թանկագին ժամանակէն տարի մը՝ ալ սահի աղարդելն և ապագայ սերունդին դժբաղդութեան օղակներուն վրայ նոր մըն ալ հիւսուի անգթօրէն:

Ամեն երեւոյթ և մեր մինչև հիմա բոլոր լըսածները դժբաղդաբար վերջին պարագան կ'ապացուցանեն ահեղապէս Վարժապետներու ընտրութիւնները կը կատարուին տեղ մը կուսակցական զգայնիկ հաշիւներով, ուրիշ տեղ մը ազգակցական ու բարեկամական շատ դիւրահասկանալի շնորհաբաշխութիւններով և շատ տեղ ալ բացարձակապէս ըստ կամս և ըստ հաճոյս: Արժանիք փնտռելու խօսքը կարծես ծիծաղի համար շինուած է. աժանը, միշտ աժանը փնտռել եղած է իրենց բոլոր հոգն ու աչքբացութիւնը, որ աւաղ, ամենամեծ գրկանքն է այդ հիւանդ գործին: Ասիկա կը նմանի մսի ջուրի և ուրիշ շատ մը փափուկ խնամքներու պէտք ունեցող մահամերձ հիւանդին կոկորդն ի վար զօռով չոր հայ թխելու դահճութեան, այն միակ արդարացումով թէ ի՞նչ ընեն, միջոց չունին կարեորը հայթայթելու և հիւանդտեսի նուիրական պարտականութիւնը կատարելու պէտք եղած կերպով:

Զէ՛, բարեկամներ, իրողութիւնը այդպէս չէ՛ և տրամաբանութիւնը՝ ալանդակ: Աղբիւրը անընկալ է, վասն զի հանրութիւնն է ան և հիւանդը, որ հանրութեան կը պատկանի, երբէք տառապելու պէտք չունի, եթէ ուսանինք ժողո-

վուրդին դուռը ափ տունելու եղանակը և ցցնելով իրաց ահռելի վիճակը, անոր գութը հրաւիրենք իր հիւանդին վրայ: Դիտնանք, շատ աղէկ գիտնանք, որ շուրջ կայ ու կայ և կը վազէ՝ թոյլն է, որ կը պակսի մեզ:

Այն, եթէ յօգուածիս ընթացքը կտրած ըլլալու վախը չունենայի, ինչ զովութիւն մը պիտի բզգայի մաղթելով, որ մեր հոգաբարձուներուն անձնական գործը այնքան շատ ըլլար, որ սիկար ծխելու ժամանակ ալ չը գտնէին և չ'զբաղուէին, այսպէս չ'զբաղուէին մեր վարժարանական և ոճով:

Ինչ որ է, եղածն եղեր է. ընտրութիւնները կատարուելը լմնցեր են և մեր տղաքը տարուան մը համար ալ նորէն կապուել են սպանդանոցներուն դուռը. հիմայ մենք կառաջարկենք հոգաբարձուներուն եղածը մինչև մէկ աստիճան դարձանելու համար ուրիշ միջոց մը, այժմէն ըսելով իրենց, որ հակառակ պարագային մէջ տարին տասներկու ամիս անպակաս պիտի ընենք մեր մտրակը իրենց գլխէն և աւելի որոշ գոյներով պիտի խարազանենք իրենց կատարած դերին ահռելիութիւնը:

Ամօթ չէ՛ ա, իրենցմէ շատեր չեն հասկնար վարժարանի լեզուէն տնօրէններն ալ թէ զբաղուած են վարժապետներուն պէս և թէ վարձուած պաշտօնեաներ են, այնպէս որ բոլորովին անկախ կերպով հսկող մարմին մը չկայ ծրագրին խզամիտ գործադրութեանը և վարժարանական ներքին աղապճաղապութեանը վրայ:

Պէտք է, որ այժմէն յանձին մէկ կամ երկու հասկցող ու կարող մարդիկներու անվարձ քօնիքով մը կազմեն, որ պարբերական այցելութիւններով հսկէ վարժարանին վրայ և ի ի հարկին վարժարանին դուռը ցուցնելով պատուէ այն վարժապետները, որոնք անկարող են վարժարանին պէտքը գոհացնելու: Տարին չը լրացած վարժապետ ճամբելու այս վերջին պարագան զործադրութեան դնելու համար տիրող օրէնքը չեղաքացնող պայմաններով պայմանաւորելու է բոլոր վարժապետներուն հետ ալ, որ անկարելի չէ:

Ան ատեն անապատին մէջ պղտիկ ուխտիս մը ստեղծած պիտի ըլլան մեր հոգաբարձուները:

Կ'սպասենք:

ԾԱՆՕԹ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Նոր Ընթերցարանը

Ա. տարի գին 60 սանգիմ, Բ. տարի գին 1 ֆր. Գ. տարի գին 1 ֆրանք: Դիմել յօրինողին ու հասցէով, Յ. Կ. Պոնճուքեան Վառնա

Բսան օրինակ գնողին համար 15 0 | 0 զեղչ:

ԱՅԿԱՅԻՔ

Մեր անցեալ թուով գրած էինք թէ Պուրկալի եկեղեցին առ ի չգոյէ քահանայի փակուած ըլլալով, ժողովուրդը զրկուած էր հոգևոր մխիթարութենէ: Այս առաւօտ Պուրկալէն զրկուած նամակէ մը կը տեղեկանանք որ Դեր. Այցելու հովիւը Ֆիլիպէի Տ. Կարապետ Սահակեան քահանան Պուրկալ զրկած է՝ հոն աւժամապէս պաշտօնավարելու համար:

— Դաւրէթի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան օտարեկան տեղեկագրէն կիմանանք թէ՛ ընկերութիւնը 1899—1900 տարեշրջանին 5 գիւղական կրթարաններուն մէջ ունի 177 երկսեռ աշակերտ. ահա՛նք ալ գիւղացի, զուրկ մըտաւորական կրթութենէ: Մանկապարտէզի մէջ ալ կան եղեր 21 երկսեռ մանուկներ: Իսկ կար ու ձեռն արհեստանոցին մէջ 18 աշակերտուհի որոց 4ը այս տարի ընթացաւարտ ելեր են. նոյն տեղեկագրէն կիմանանք նաև թէ Պարսից Շահը Եւրոպա ճամբորդելու ժամանակ Դաւրէթ հանդիպած ըլլալով, ընկերութեան Արհեստանոցին մէջ պատրաստուած ընտիր ձեռագործ մը մատուցուել է ն. Վեհափառութեան որ հաճութեամբ ընդունել և խոստացել է Եւրոպայէ վերադարձին Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը քաջալերել իւր արքայական շնորհներով:

— Սօֆիայէն կը գրեն թէ, հայ պաշտար մը իր մէկ ընկերոջը հետ դաւաճացիէ մը առած Հայաստանցի քահանայի մը լուսանկարը անոր ասոր ցուցնելով կը ջանայ եղեր զանոնք համոզել, ըսելով որ «նայեցէ՛ք, որչափ գեղեցիկ ու խելօք տէրտէր մըն է», որպէս զի յաջողի զայն տեղւոյն եկեղեցին բերել տալ:

(Շիտալը, ֆոթօլրաֆով աշիկտես կամ փեսատես լսած էինք, բայց տեսէ՛ք—տես լսած չունէինք, արդեօք այս ալ դարամտիկ մօտա՞ մըն է . . .):

— Մարտիկոյ մէջ հրատարակող «Արմէնիա» լրագիրը սր երկու ամիս դադար առած էր, սկսաւ հրատարակուիլ օգոստ. 23էն: Յաջողութիւն:

ՊԱՏԱՍԻԱՆ

Սօժիսի Տ. Արիստակես Ա. ֆանանայի
բաց նամակին.

«Գինեգործ համառանի 3 տեղամ ամուսնացած
ըլլալը, ինչպէս նաև Ձեր կնկան իր զաւակներովը Սո-
ֆիա դարը ու այս պատճառաւ գինեգործին բողբէն ա-
սած քալած ըլլալը իմացած ենք Ֆիլիպէի Տ. Կարապետ
բաճանայ Սահակիանէն և եկեղեցիին ժամակոչէն: Այս
բաճանային ու ժամակոչին ալ իմացնող ու «վկայական տը-
ինքն ըսողները եղած են՝ Սաչաքճը Եղիա և սրճագործ
Տիգրան անուն ազգայինը, որոնցմէ մին Սօֆիայի նախ-
կին Թադ. խորհրդոյ անդամներէն է եղեր:

Ընշուշտ մեր այս բացատրութենէն գոհ պիտի չեալ:

29 օգոստ. Ֆիլիպէ

ՍԼԱԲ

(Քանի որ թէ՛ այդ լուրը տուողը և թէ՛ զայն հեր-
բողը երկու բաճանաներ էղած են, ա՛լ իրենց կը
մնայ խնդիրը մէջերին կարգադրել և ճերմակ երես
գործ գալ...):

ՆԱՄԱԿ ԻՄԱԱԳՐՈՒԹԵԱՆ

Ֆիլիպէնին ի՞նչ խշկիւզար քաղականութիւն

Ֆիլիպէտէ իշ եօգ տէրէր. պօշ լաֆ: Ալլահ՝
պուրունմաղ լահօն գումաշը կիպի նատրիւլ էմ-
սալ իքի լւչիլիզար թաղականլարըմըլա զէվալ
վէրմէսին: Տօղրուսու՝ չարշը ատամը օլտուգա-
րընը իսպաթ իթմէք իշին քիլիսէյի տէ չարշը-
յս պէնպէթիպ, ալլուսընտա պուրունան գերեզ-
ման թաշլարընը եէրլէրինտէն սէօքէրէք մէ-
զաթա չըգարբօրլար: Վարժապետլէրէ օլան պօր-
նու էօտէմէք իշին թաշտան բարա չըգարան
չու իւշիլզար իքի թաղականլարա հիշ պիր տէ-
յէճէք եօգ տըր: Պրագալըմ եիւզ Ֆրանքլըզ
թաշը եիրմիյէ սաթմալարընը, ումում միլլէթին
մալի օլան պիր էշեայը կէրէք Բաթրիգիսանէ-
տէն, կէրէք Այցեիւ Հովիտէն վէ կէրէք մահալի
միլլէթտաշլարընտան խապէրօիզ օլարագ ալըմ
սաթրմ իտէն մէրգուման իքի թաղականլարա՝
քէնտիլէրինէ մալի չօղա օթուրմամագ իշին ա-
լէնէն իսթար իտէրիզ քի՝ գերեզման թաշընը
էսկի եէրինէ կէթիւսինլէր: Քէզալիք, անլէրէ
գայիմ օլաճագ եէնի թաղականլարա տա թաղ-
սիյէ իտէրիզ քի, իշէ միւպաշէրէթ իթտիքլէ-

րինտէ՝ էն էվլէլ քիլիսէնին պիւթիւն էշեալա-
րընը վէ քիւթիւք վէ էվրագլարընը էյիճէ նա-
զարու տըգգաթտան կէշիւսինլէր: Ղիրա՝ քիլի-
սէ ալլուսընտա կէօղ էօնիւնտէն գօճաման գե-
րեզման թաշը գալգարսա՝ ուֆագ թէֆէք պաշ-
գա շէյլէրին տէ գալգապիլմէսի շիւպհէլէրէ զա-
հիպ օլապիլիք:

Ֆիլհագըգա, «Տունն իմ տուն աղօթից կո-
չեցի և գուք արարիք զայն այս աւաղակաց» ֆըր-
գասը շախսէյնը միւթէճասըրէթէյնէ բէք մինա-
սիպ կէօրիւեօրիմ:

27 Օգոստ. 1900

Անտըլ պիր Ֆիլիպէի

Ֆիլիպէ

ԵՐԳԸ

Վերջադարձի մարտ ճայներ
Աշունին հետ դարձան նորէն,
Նրաւ քոյր մը կը քոչի վեր
Ծաղկի խաւում քերթիկներէն:

Տերեւաքանի անուրջներու,
Որ խայտաղիկ անցած գարնան,
Օրեր հիւսկի գաղած հետո՝
Այս, վերսին չի պսի դառնան:

Սեւ յուշերու մէջ անցեալին
Զո՛ւր կ'որոնեն աշերս հիւսկի
Ծոյի ժայռն փրփուրն, աշին,
Եւ հրճուպիկ սահող նաւակ:

Արշադարձ գնաց անհետ...
Վարքերու քոյրն աշ քոչ խաւի,
Կեանքի անոյշ երազին հետ...
Երգը, երգը գէթ չը մարի...

ԹԱՎԱ

ТРУПА НОВА ЗВѢЗДА

Ծանօթ գերասանահի Տիկ. Պայծառ Փասուլ-
եանեան՝ երիտասարդ երկանո ամաթէօններէ
Էրասանական խումը մը կազմած է «Նոր Աստղ»
անունով: Սոյն խումըն այս չարթու Վառնայէն
մեկնեցաւ Պուլկարիոյ մէկ քանի քաղաքներու
մէջ ներկայացումներ տալու համար: Ա. Ներկայա-
ցումը պիտի տայ ի Տօպրիչ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Իրոշմարտութի ցուցադրութիւն

Արուեստահանդէսին առթիւ զանազան երկիրներու թղթատարական գրողմաթուղթ հաւաքողներէն 150 անձինք Բարիդի Պարտիզմաշակութեան Ընկերութեան Սրահին մէջ ցուցադրութիւն մը կազմակերպեցին: Յուշագրիւղ գրողմաթուղթերու արժէքն է երկու միլիոն ֆրանք: Հաւաքելէք ոչ միայն մէկ ու կէս միլիոն ֆր.ի ապահովագրած են գրողմաթուղթերը, այլ վեց ոստիկաններ ալ աշակերտ չսկին: Երեսուն ամէնէն արժէքաւոր գրողմաթուղթերուն մէջ կան Մօրիս կղզիին (Հնդկական օվկիանոսի մէջ) յատուկ եղող գրողմաթուղթը, 1847ին տպուած, 1,100 անգլիական ոսկի արժէքով, Հաւայի կղզեաց անգլիական միսիոնարներու գրողմաթուղթը՝ 600 կամ 800 անգլ. ոսկի արժողութեամբ. Բրիտանական Առեւտրի գրողմաթուղթը՝ 600 կամ 700 անգլ. ոսկի, և Մոլտովիական գրողմաթուղթը՝ 300 անգլիական ոսկի արժէքով:

* *

Ռուսիոյ Չարը 500,000 ֆրանքի արժողութեամբ զմուռնաներով և շողակներով զարդարուն մանեակ մը նուիրեց Սերպիոյ Տրակինա Թագուհիին, որուն կնքահայրը եղած էր:

* *

Վայրի մարդը. — Ամերիկեան լրագրիւրը կը ծանուցանեն թէ Կոֆառուէի անտառներուն մէջ (Մ. Նահանգք) վայրի մարդ մը գտնուած է որուն համար իրենք իրենց կը հարցնեն թէ արդեօք նախապատմական կենդանիին մէկ նմոյշն է որ դարերու բազաքակրթութեանց ազդեցութիւնն արհամարհելով մինչեւ մեզ հասած է, թէ տարուինեան վարդապետութեան Կոռումաձ շրջանն է, Վայրինին խոշոր, ուժեղ և կայտառ մարդ մ'է: Աչքերէն կրակ կը ցատկէ: Զինքը ժառն տեսնողները կ'ըսեն թէ ձեռքին և ոտքերուն եղունգները Լի Հունկ Զանկի եղունգներուն չափ երկայն են: Ոչ գլխարկ ունի ոչ հագուստ: Հազիւ թէ լաթի կտոր մը մինչեւ ծունգերը կ'իջնէ, իր համեստութեան վրայ գաղափար մը տալով: Չեղբը գաւազան մը ունի որ իբր լախտ կը ծառայէ իրեն: Անով կը բալէ, կը ցատկէ, կը որսայ: Ուրիշմը Պրսզըն անուն ագարակապան մը, որ պարկեշտ մարդ մ'է, հաստատած է թէ իր աչքովը տեսած է վայրենին և խորհուրդ կուտայ շատ չմօտենալ անոր, որովհետեւ մարդակերութեան բնազդները պահած է: Ոստիկանութիւնը քսան և հինգ քաղաքացիներու հետ անոր ետեւէն ինկած է մարդկութեան այս նոր նմոյշը բնիւ լու համար: Կրկեսներու անօրէններ հիմակուքն լեցուն գին մը կուտան վայրի մարդը գնելու:

ՍԱԼՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ



Պոյն վերնագրով այս անգամ Կ. Պոլսէն մեզ զըրկած են մէկ քանի յօդուածներ, որոնք հարուստ կամ բարեկեցիկ դասակարգի բարքերու քանի մը պատկերները կը ներկայացնեն, եւ որոց առաջինն է հետեւեալը.

ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐ Ա.

(Մեն Կղզիին մէջ. — Անտառի մը երեւոյթը տուող մէկ քանի խոշոր ծառերու մէջտեղ, սպիտակ ներկուած տուն մը, փետուրեաններուն քեօշը, ինչպէս կըսեն կըզդիին մէջ: Այդ որը, Յուլիսի կիրակի առտու մը, Տիւկին փետուրեան և ամուսինը տան պատշգամին վրայ կը սպասեն նոր ծանօթացած հիւրերու (Այրի տիկին Խոսրովեան և Օրիորդ Խոսրովեան) որոնք Պէօլիքաթէրէէն հըրաւիրուած են քանի մ'օր Բրինգիւս անցնելու: Մօսիէօ Տիւրան փետուրեան, իրենց զաւակը, շոգենաւին գալը տեսած և նաւամատոյց իջած է արդէն հիւրերը զիմաւորելու: Քառորդ ժամ վերջ, կառք մը, ետեւէն ուրիշ մ'ալ կանցնին յանկարծ վարի ծառու զիւն և կուգան կենալ փետուրեաններու տան առջև: Տան տիրուհին, Ժպտուն, իր հոգմահարը կերերցնէ ի նշան ուրախութեան):

— Ահ, վերջապէս...

— Բարիլոյս, անուշիկս...

— Բարի եկաք, ուշ մնացիք...

— Անհամբեր կ'սպասէինք կոր.

— Ծնորհակալ եմ. առաջին շոգենաւը փախուցինք...

— Ի՞նչ աղւոր օգ այսօր, Տիկին...

— Օհ, սքանչելի...

(Ասոր ձօռ խօսակցութենէ մը վերջ որ կը շարունակուի, Տիկին փետուրեան և տիկին Խոսրովեան կարօտով կը համարեն զիրար. յետոյ Մարօնը կը մտնեն, մինչդեռ ծառաները կը վազեն հիւրերուն վայրկեանը կառքէն վար առնելու: Պահ մը հանգստանալէ վերջ, Տիկին փետուրեան, նազելի շարժումներով, երկու կիները իրենց յատկացուած սենեակը կ'առաջնորդէ որպէսզի փոխուին: Սենեկին մէջ մինակ կը մնան փետուրեան էֆ. և զաւակը:)

Փետուրեան. — Ծօ, աս ո՞րքան բան բերեր են հետերնին, արդեօք շատ պիտի մնան:

Տիւրան. — Անանկ կ'երեւայ կոր... յանցանքը մօրս է. այնչափ հրաւիրեց որ... գիտե՞ս ի՞նչ բերեր են հետերնին. (Խնդալով) խոշոր սնտուկ մը, երկու վալիզ և չեմ գիտեր որքան ալ բաքէթ.

— Զարմանալի բան. չըսե՞ս ֆիստաններն բոլոր մէկտեղ բերեր են... Տիկինին ի՞նչ ըլլալը գիտենք... հաւնեցա՞ր աղջկանը:

—Խըյ՝ իս բան... կարծես թէ մէկ օրուան մէջ պոյ նետեր է... այնքան նիհար է որ...

—Գիտես քի մօրը քիթէն ինկած է:

—Գոնէ շիք բան մը ըլլար. (Քիյ մըրտն) Տե- սա՛ր վալիդներուն վիճակը.

—Մարդ կամչնայ հետը առնելու: Պէլքի մէ- ջինները աղէկ են: Եթէ պառլամենտը, գլուխս կը ցաւի կոր ըսելով ոտները կը մնամ և անգամ մը աչքէ կանցնեմ. չըլլար.

—Լռէ. կուգան կոր:

(Սեղանին վրայ, կէս ժամ վերջ)

Տկն. Փետուրեան. — Ինչպէ՛ս, Տիկին, հաւնե- ցա՛ք մայօնէզին. շատ աղւոր եղեր է. հէ՛... գիշերուընէ յատկապէս ձեզի համար ապսպրեցի. ամեն ատեն ասանկ սխալօղ չը գտնուիր:

Տկն. Խոսրովեան. — Այո՛, շատ թարմ շիտակը. վերջապէս գիտէ՛ք գիւղը ուրիշ է... Բերայի մէջ ստակով ալ չը գտնուիր աղէկը... Երէկ գիշեր ուրախ իւրիւքէր մը բերած էր մեր ձկնոր- սը... այնպէս չէ՛ Մառի.

Օր. Խոսր. — Այո՛:

Տկն. Փետր. — Այնպէս է. բայց գիտցէ՛ք թէ մայօնէզը ամեն խոհարարի գործ չէ... շատ ալ կը սիրեմ մայօնէզը. ամօթ չէ ես. այս պատ- ճառաւ բոլոր խոհարարները կը ճամբէի... բացց հիմա Գաղլացի մը ունիմ որ... ըսելիք չիկայ շիտակը. քիպար մարդ մը. հինգ տարի Պառօն Պէլտովին քոֆն էր:

Տկն. և Օր. Խոսր. — . . . ?

(Հինգ վայրկեան վերջը: Սպասաւորը մօտէնը կը պը- տրացնէ:)

Փետ. էֆ. — (Ժպտալն) Ի՛նչպէս գտա՛ք մեր տու- նը, տիկին... վերջապէս ձեր տանը չը նմանիր, ամեն տունի չէ՛ք հաւնիր հարկաւ...

Տկն. Խոս. — Ընդհակառակը, շատ գեղեցիկ, շատ ֆէրս հ տուն մ'ունիք...

Փետուրեան. — (պարծալով) Այո՛... լուսահոգի մեծ հայրս շինել տուած է. լսած էք հարկաւ... Գառկա մարտիրոս ամիրնա որ Պէղճեան ամիրան ծեծած է օր մը... կըսեն... վախթին է՛ն կրա- կոտ և հովարտա մարդը... ես այնպէս կը կար ծեծ թէ այս տունը շուրի մէջ քսան հազար ոս- կիի մալ եղած է... պարտէզը տեսա՛ք, Տիկին... բոլոր ծառերը նիսէն բերուած է:

Տկն. Խոսրովեան. — . . .

Տկն. Փետ. — Եւրոպայէն վերադարձած ատեն իրեն հետ բերած է այն ծառերը... ձեռքը բաց մարդ մէ եղեր...

Տկն. Խոս. — . . .

Օր. Խոս. — Սա ետեւի անտառն ալ ձեռն է, Տիկին. որքա՛ն գեղեցիկ է...

Տիւրան. — Այո՛, օրիորդ, եթէ կուզէք ճաշէն

վերջ պտոյտ մը կընենք միասին, եւրոպայէն բեր ուած թուշունները ցուցնեմ ձեզի...

(Ճաշէն վերջ սալօնին մէջ: Օր. Խոսրովեան և Մօսիէօ Տիրան պտոյտի ելած են բառորդէ մը ի վեր: Ծառան սուրճը բերած է:)

Տկն. Փետ. — (Թիկնաթոռի մը մէջ թաղուած) Է՛, ի՛նչ կընէք կոր տեսնենք Պէօյիւ քտէրէ, ի՛նչ- պէս կը զուարճանաք կոր... էթիքէթ կայ նորէն...

Տկն. Խոս. — Օհ, շատ անհամ... բան մը չկայ... եղբայրս ամէն գիշեր նատիրեաններուն բո- գէրի կերթայ... Մառին ալ շատ անգամ մէկ- տեղ կը տանի... բոլորովին մինալ կը մնամ գը- րեթէ...

Փետ. — Ի՛նչ եղաւ Օր. նատիրեանին նշանտու- րը...

Խոս. — Զուրը ինկաւ, (խնդրով) առնող չկայ որ...

Փետ. — (Հարմարեցնելով) Ի՛նչ կըսէ...

Խոս. — Հապա՛... փեսացուն հինգ հազար ոսկի կուղէր կոր... աղջկանը քով բարա մը չկայ...

Փետ. էֆ. — Հարկաւ. ամէնքն ալ կերաւ հայրը.

Տկն. Խոս. — Գոնէ աղւոր բան մը ըլլա՛ր աղջի- կը... գոչել չէ ամա, Մառիս անկէ տասն ան- գամ աղւոր է...

Տկն. Փետ. — Տարակոյ չկայ... պելքի աղջիկէդ ալ նախանձեցան... ո՛վ գիտէ...

Տկն. Խոս. — Հարկաւ... (մայնը մեղմացնելով) Դեռ անանկ բաներ լսեցի որ... ինչ և է... վաղը կը պատմեմ...

(Օրիորդ Խոսրովեան և Տիրան վերադարձած են:)

Տիրան. — Ահողջ պարտէզը պտոյտցի օրիորդը. Օր. Խոս. — Այո՛. շատ գեղեցիկ, շիտակը...

Փետ. էֆ. — Բարա կընեն ամէնքն ալ...

Տկն. Փետ. — (Ոսֆի եղբոր) Թողէք սա պարտէզը կաղաչեմ... ի՛նչ պիտի ընենք վերջը... ան նա- յինք...

Տիրան. — Տիասգելօ կերթանք...

Տկն. Փետ. — Խրիսթօս աւելի աղւոր է...

Փետ. էֆ. — Կրան-թուրը ըրէք կառքով, աւելի հաճելի է... արդէն ես չի պիտի գամ... չոր- սերնիդ աղէկ կըլլաք...

Տիրան. — Հայրիկս թող չի գայ.

Տկն. Փետ. — Բեզի ի՛նչ, ուրիշ կառքով մալ ան թող գայ...

Տիրան. — Չէ, հայրս թող չի գայ...

Փետ. էֆ. — Արդէն գլուխս կը ցուրի կոր. հոս կսպասեմ ձեզի:

(Երկու օր վերջ, կէս գիշերի մօտ: Տիկին Խոսրովեան եւ աղջիկը սենեկին մէջ:)

Օր. — Սոսլալի կերպով կը նեղանամ կոր, ճա- թելիք բան է:

Մայրը. — Մի՛ պոռար, կիմանան.

—Ո՛չ անտառէն բան մը հասկցայ, ո՛չ պտոյտնե-
րէն, ո՛չ ալ իրենցմէ. առ ի՞նչ չտես մարդիկ
են, ալ չեմ կրնար հոս մնալ:

—(Հեզնոս) Տիրաւին չը հաւնեցա՞ր:

—(Խնդարով) Վայ գլխուս, առ էր պակաս:

—Մարդիկը հազար կտոր կըլլան կոր հաճելի
ըլլալու համար:

—Այո, գիտեմ. մայօնէզը, դաղիացի խոհարար-
նին, Նիսէն բերուած ծառերը, միամիտ մի՛ ըլ-
լար, մամա:

—(Խնդարով) Իրաւ անանկ, առ տաքուն երկու օր
իրարու վրայ մայօնէզ կերանք:

—Անտանելի բան է. գիշերը մինչև լուս սան-
ճիին ցաւէն չեմ քնացեր:

—Վաղը կերթանք:

—Այո. վայրկեան մը չեմ կենար ալ. պիտի խեն
թենամ:

(Հետեւեալ օրը—Հրաժեշտը)

Տկն. Փետ. —Վերջապէս չնստաք. անհանգիստ
եղաք անշուշտ. չիտակը ամօթով մնացի ձեր քով:

Տկն. Խոս. —Ի՛նչ կըսէք, կաղաչեմ. շատ շնոր-
հակալ ենք. շատ հանգիստ էինք. դուք ալ մեզ
հրամայեցէք:

Տիրան. —(Օրիորդին) Շատ անակնկալ մեկնում
մը, հաւատացէք, բոլորովին տխուր կը թողուք
մեզ:

Օր. —Ընդհակառակը. այնքան համակրելի ե-
ղաք մեզի:

Փետ. էֆ. —Կը լուսամ ո՞ր չէ՞ք մոռնար մեզ,
Օրիորդ:

Տկն. Խոս. —Դուք ալ մի մոռնաք մեզ, Փետուր
եան էֆ. տիկինիդ ալ կապասեմ անհամբեր:

Տկն. Փետ. —Շնորհակալ եմ, քանի մը օր ալ
մենք կուգանք:

Ամենքը մէկէն. —Մնաք բարով, երթաք բա-
րով, Օւսուառ, Ատիէօ, ի տեսութիւն, չոգենա-
ւը կը սուրէ կոր աղջիկս, հայտէ. պօն վուայած.
մնաք բարով, երթաք բարով:

(Երբոր կ'անհետանան)

Տիկին Փետուրեան. —Օֆ, մէրաքնեքս ելաւ,
անհամ մարդիկ, երանի՛ թէ չը հրաւիրէի, օֆ,
(Ժառանցիկ) Մօ, Մարգար, խահլէ մը եփէ ինծի:

ՏՕՄԻՆՕ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. Հին Կսակարան. Բ. Նոր Կսակարան

Նոր հրատարակուած սոյն պատկերազարդ 2
դասագիրքերը որ բարոյական դատաւարակու-
թեան գեղեցիկ սկզբունքներ կը ներշնչեն ուսա-
նողին, կը ծախուին մէյմէկ ֆր. Վաւնա Զարպ-
հանէլեան գրատունը:

“ՀԱՅԵԼԻ”Ի ՕՐԱՑՈՅՑԸ

1900

Սեպտ. 1 Ուրբաթ Պահք: Պատմական. — 1899
սեպտ. 1ին ֆիլիպէի աղգ. հաստատութեանց պատմա-
պատմաճանափ երկու վկայեալ վարպետ բժիշկներու ըրած
երկար “քօնցօրթողէն վերջը աղգային մանկապարտէզը
հոգին աւանդեց” (Բոժ. — Ուսպէս զի իրենց կուսակից
զօղողին բացած մանկապարտէզը առաջ երթայ):

Օղը ամպամած և հոգմ:

Սեպտ. 2. Շաբ. Սրբոյն Յակոբայ և Հմաւոնի. . . Պատ-
մական. — 1896 Սեպտ. 2ին քօնք աղջադարբէկին կեդ-
րոնը որոշեց Տէրծի երկարակի այն անձը որ կը հրա-
պարակէ իրենց մենծ—աղան խաչադողութիւնները. տի-
կին աղջադարբէկ շատ գոհ մնալով այս վճռէն մեծ
տխորժով կերակուր կերաւ և 2 շիշ ալ շամբանիս խմեց
իր. . . խաչադող հերոսներուն կենացը:

Սեպտ. 3 Կիր. Լատինացոց եօթն ցաւոց կուսին: (Բոժ.
— Հայոց ալ անթիւ ցաւոց ազգին): Պատմ. — 1897ին Թիֆ-
լիզի Իվանօի պիրահանէն 10,000 ընտրեալ հայդուկներ:
Ճամբայ ելան օգնութեան երթալու 2ինաստան գտնուող
հայերուն:

Սեպտ. 4 Բշ. Սրբոյն Անտրէի զօրավարին: Պատմական. —
1900 | 1901 Սեպտ. 4ին Վառնայի և ֆիլիպէի Աղգ. վարժարաններուն համար “պոյլու պոյլու և բէլլէ բու-
լաք եւրիմաէ” ուսուցիչ կը փնտրուի:

Սեպտ. 5 Գշ. Սրբոյն Անտրիանոսի և կնոջնորա: Պատմա-
կան. — 1899 սեպտ. 5ին “Բըթի—Հարժում” թրքարաւ-
բառ հրատարակութիւնը ջուրը ինկաւ:

Սեպտ. 6 Գշ. Պահք: Պատմական. — 1898 Սեպտ. 6ին
Հարժում—ճգնաւորական դատը հետաձգուեցաւ Հոկ-
տեմբեր ամսոյ:

Սեպտ. 7 Եշ. Սրբոյն Արքահայր և Խորենայ և անարժաթ
բժշկացն. (Բոժ. — որոց ամեն օր է յիշատակ): Պատմա-
կան. — 1899 սեպտ. 7ին Պուրկազի տիրահոջակին նա-
խագահութեամբ “սինիքորային խումբ” Արստուրին
կապէլին մէջ իր անդրանիկ ժողովը գումարեց:

(Շար.) ֆիլիպէ

ԱՌՕՆԹՐԱՏԱՄՈՍ

Յանձնակատար ՆՇԱՆ ՍԱՐԲԱԶԱՆ կը ծանու-
ցանէ արգոյ հասարակութեան թէ Վառնայի, Հուսնուի,
Ռուսնուի, Թրնովցի, Բլէվնայի և Սօֆիայի միջև շարու-
նակարար և կանոնաւոր երթևեկութիւն հաստատած է:
Կը խոստանայ գոհացուցիչ պայմաններով ճշդիւ գործադրել
իրեն ըլլալիք յանձնարարութիւնները: Իր կայարաններն
են, ի Վառնա Զարպհանէլեանի գրատունը, ի Հուսնու
կոստան Պօղածեանի խանութը, ի Ռուսնու գալֆանան
եղարաց ոսկերչատունը և ի Սօֆիա Մարտիրոս Յովհան-
նէսեանի սրճարանը:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.